



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 236-Ն

«02» 04 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 1047-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009թ. մայիսի 12-ի <Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին> N445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009թ. դեկտեմբերի 7-ի N 1047-Ն հրամանով հաստատված միջին մասնագիտական կրթության 0307 <Ֆիզիկական կուլտուրա և սպորտ> մասնագիտության պետական կրթական չափորոշիչ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին գլխի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3. Միջին մասնագիտական կրթության 0307 <Ֆիզիկական կուլտուրա և սպորտ> մասնագիտության համապատասխան հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում են հետևյալ որակավորումները.

ա. ֆիզկուլտուրայի ուսուցիչ

բ. մարզիչ: >>:

2) 2-րդ գլխի 7-րդ կետը լրացնել <<4) մարզիչներ:>> նոր ենթակետով:

3) 6-րդ գլխի 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<20. Միջին մասնագիտական կրթության 0307 <Ֆիզիկական կուլտուրա և սպորտ> մասնագիտության՝ շնորհվող որակավորումներին համապատասխան հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է ըստ աղյուսակ 3-ա-ում և աղյուսակ 3-բ-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:>>:

4) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-017 մոդուլի <Մոդուլի անվանումը> տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Մոդուլի անվանումը <Ընտրած մարզաձևում մարզադահլիճի կահավորումը, հիգիենիկ պահանջները և մանկավարժական կատարելագործումը>; <Մարզիչ> որակավորման համար՝ <Ընտրած մարզաձևում մարզադահլիճի կահավորումը եվ հիգիենիկ պահանջները>>:

5) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-017 մոդուլի <Մոդուլի տևողությունը> տողը <72 ժամ> բառերից հետո լրացնել <<մարզիչ> որակավորման համար՝ 20 ժամ> բառերով:

6) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-018 մոդուլի <Մոդուլի տևողությունը> տողը <72 ժամ> բառերից հետո լրացնել <<մարզիչ> որակավորման համար՝ 66 ժամ> բառերով:

7) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-019 մոդուլի <Մոդուլի տևողությունը> տողը <72 ժամ> բառերից հետո լրացնել <<մարզիչ> որակավորման համար՝ 64 ժամ> բառերով:

8) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-020 մոդուլի <Մոդուլի տևողությունը> տողը <72 ժամ> բառերից հետո լրացնել <<մարզիչ> որակավորման համար՝ 36 ժամ> բառերով:

9) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-021 մոդուլի <Մոդուլի տևողությունը> տողը <72 ժամ> բառերից հետո լրացնել <<մարզիչ> որակավորման համար՝ 64 ժամ> բառերով:

10) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-022 մոդուլի <Մոդուլի անվանումը> տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Մոդուլի անվանումը <Ընտրած մարզաձևում մրցակցային գործունեության առանձնահատկությունները և մանկավարժական կատարելագործումը>; <Մարզիչ> որակավորման համար՝ < Ընտրած մարզաձևում մրցակցային գործունեության առանձնահատկությունները >>:

11) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-022 մոդուլի <Մոդուլի տևողությունը> տողը <72 ժամ> բառերից հետո լրացնել <<մարզիչ> որակավորման համար՝ 56 ժամ> բառերով:

12) Աղյուսակ 2-ում ՖՈՒՄ-4-09-040 մոդուլի <Մոդուլի տևողությունը> տողը <54 ժամ> բառերից հետո լրացնել <<մարզիչ> որակավորման համար՝ 26 ժամ> բառերով:

13) Աղյուսակ 2-ը լրացնել հետևյալ նոր մոդուլներով.

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ>		
1.	Մոդուլի դասիչը	ՖՈՒՄ-5-11-041
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակը ուսանողին սպորտի տեսության, նրա կառուցվածքի, սոցիալական ֆունկցիաների, ինչպես նաև սպորտային մրցումների էության և մրցակցային գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ որոշակի տեսական գիտելիքներ տալն է:
3.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՖՈՒՄ-4-09-015 <Ֆիզիկական դաստիարակության պարապմունքի ձևերը> և ՖՈՒՄ-4-09 -022 <Ընտրած մարզաձևում մրցակցային գործունեության առանձնահատկությունները> մոդուլները
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
6.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել սպորտի տեսության առարկան և հիմնական հասկացությունները
7.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում սպորտի տեսության առարկան, կիրառման անհրաժեշտությունը, 2) ճիշտ է բացատրում սպորտի տեսության հիմնական հասկացությունները, 3) ճիշտ է մեկնաբանում սպորտային շարժման, նրա կազմակերպման էական կողմերը, սպորտի սոցիալական գործառույթները:
8.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել սպորտային մրցումների համակարգը, մարզիկների մրցակցական գործունեությունը
9.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սպորտային մրցումների համակարգը և դերը, 2) ճիշտ է ներկայացնում մրցումների արդյունքի որոշման կարգը, 3) ճիշտ է նկարագրում մրցումների անցկացման պայմանները, 4) ճիշտ է ներկայացնում մրցումների ձևերը, 5) ճիշտ է մեկնաբանում մրցակցական գործունեության առանձնահատկությունները:
10.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել սպորտային մարզման համակարգը
11.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սպորտային մարզման նպատակը, խնդիրները, միջոցներն ու մեթոդները, օրինաչափությունները, 2) մարզիկի ֆիզիկական պատրաստության վիճակը ճիշտ է գնահատում, 3) ճիշտ է գնահատում մարզիկի շարժողական, ուժային և արագային ընդունակությունները, 4) ճիշտ է կիրառում մարզիկի կոորդինացիոն ընդունակությունների մշակման մեթոդիկան, 5) ճիշտ է կիրառում մարզման գործընթացի կառուցվածքի տարրերը, 6) ճիշտ է ընտրում մարզման կառուցման մեթոդիկան, 7) ճիշտ է պլանավորում մարզման ընթացքը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <ՄԵՐՍՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ>		
12.	Մոդուլի դասիչը	ՖՈՒՄ-5-11-042
13.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին անհրաժեշտ գիտելիքներ տալ մերսման մասին, ձևավորել մերսման համապատասխան ձևերը, մեթոդներն ու տեսակները ընտրելու և կիրառելու կարողություն: Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կարողանալու է հիմնավորել մարզական մերսման դերը և ազդեցությունը օրգանիզմի վրա,

		օգտագործել մերսման ֆիզիկական և տեխնիկական միջոցները, կատարել ինքնամերսում:
14.	Մոդուլի տևողությունը	52 ժամ
15.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱԱՕ-3-08-001 <Անվտանգություն և առաջին օգնություն>, ՖՈՒՄ-4-09-004 <Սիրտանոթային և նյարդային համակարգի անատոմիական առանձնահատկությունները> և ՖՈՒՄ-4-09-005 <Ընդհանուր և մարզական հիգիենա> մոդուլները
16.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
17.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մերսման զարգացման պատմությունը, տեսակները և մեթոդները
18.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում մերսման նշանակությունը, անհրաժեշտությունը մարզիկների համար, 2) ճիշտ է ներկայացնում մերսման զարգացման փուլերը և այդ բնագավառում գիտական նվաճումների կիրառումը, 3) ճիշտ է ներկայացնում մերսման տեսակները, 4) ճիշտ է ներկայացնում մերսման մեթոդները:
19.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մերսման ազդեցությունը տարբեր օրգան-համակարգերի վրա, մերսման ցուցումներն ու հակացուցումները
20.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մերսման ազդեցությունը տարբեր օրգան-համակարգերի վրա, 2) ճիշտ է բացատրում մերսման գործընթացի ցուցումները, 3) ճիշտ է բացատրում մերսման գործընթացի հակացուցումները, 4) ըստ իրավիճակի ճիշտ է ընտրում կիրառվող քսուլները և համանման միջոցները, 5) ճիշտ է ընտրում մերսման դիրքը, 6) ճիշտ է ընտրում ձեռքերի դիրքը և շարժումները:
21.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել մերսման գործողություններ
22.	Կատարման չափանիշներ	1) մերսողի պարտականությունները ճիշտ է ներկայացնում, 2) ճիշտ է կատարում ինքնամերսում, 3) ճիշտ է կատարում մերսման գործողություններ, 4) ճիշտ է ներկայացնում մերսման իրականացման տեղին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները, 5) կազմում է անհրաժեշտ փաստաթղթեր
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <ՄԱՐԶԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ>		
23.	Մոդուլի դասիչը	ՖՈՒՄ-5-11-043
24.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մարզական տերմինաբանության ճիշտ կիրառման ունակություններ:
25.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
26.	Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
27.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
28.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել << լեզվական քաղաքականության իրավական նորմերի պահանջները
29.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում լեզվական քաղաքականության վերաբերյալ << օրենքները և գերատեսչական նորմատիվ ակտերը,

		2) ճիշտ է մեկնաբանում իրավական ակտերի դրույթների կիրառման կարևորությունը:
30.	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել մարզական տերմինները
31.	Կատարման չափանիշներ	1) մարզական տերմինների նշանակությունը ճիշտ է բացատրում, 2) մարզական տերմիններն ըստ իրավիճակների ճիշտ է կիրառում, 3) գրագետ կազմում է գրավոր մարզական տեքստեր:

2. Նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և իրավաբանական վարչություններին՝ սահմանված կարգով հրամանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:



Ա. ԱՃՈՏՅԱՆ